Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 30-06-2025 թ. որոշմամբ
««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2024 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՄԵԼԻՔ ԱԴԱՄՅԱՆ 2/2
1.3 Պետական գրանցման համարը		222.160.00202
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2003-10-07
1.5 ՀՎՀՀ-ն		02569972
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)10502076
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		www.coaf.org
1.8 Էլեկտրոնային փոստը		coaf@coaf.org
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Լիանա Ղալթաղչյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	176	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	ՉիզԱփ ծրագիր	4,620,000
	Հավաքելով բնության բարիքները	5,400,000
	H.O.P.E. ծրագիր	42,433,442
	Արթ թերապիայի ծրագիր	3,978,195
	Դեբետի կիրճում բնակվող ընտանիքների և երեխաների ապրուստի բարելավում	7,192,500

Digitally signed by KARAPETYAN NVARD 6009760216
Date: 2025.06.30 12:51:07 AMST

	Լեզվական հորիզոններ	73,235,044
	Լոռու մարզի ՔՈԱՖ ՍՄԱՐԹ Կենտրոնի 80 երեխայի համար թվով 4 աշխատարանի իրականացման համար	270,000
	ՀՀ գյուղական համայնքների զարգացում ծրագիր	5,212,339,509
	Լոռին ձեր հաջորդ ուղղությունը	25,584,757
	Դալմա-ՔՈԱՖ կրթաթոշակներ ծրագիր	3,000,000
	Մեկ դար, երկու լեգենդ	24,011,999
	Բիզնես գործունեություն	147,921,837
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	ՀՀ գյուղական համայնքների զարգացում ծրագիր	10,159,552
	Բիզնես գործունեություն	158,061,112
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
	Կահույք	10,699,087
	Ձեռնարկներ	29,640
	Խաղ	7,000
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
ՁիզԱփ ծրագիր	17,407,637	
Հավաքելով բնության բարիքները	3,355,000	
H.O.P.E. ծրագիր	87,613,394	
Մեկ դար, երկու լեգենդ	22,192,560	
Անգլախոս գյուղական համայնքներ ծրագիր	96,149,002	
Արթ թերապիայի ծրագիր	3,462,910	
Դեբետի կիրճում բնակվող ընտանիքների և երեխաների ապրուստի բարելավում	4,258,983	
Լեզվական հորիզոններ	54,288,679	
Լոռու մարզի ՔՈԱՖ ՍՄԱՐԹ Կենտրոնի 80 երեխայի համար թվով 4 աշխատարանի իրականացման համար"	99,000	
ՀՀ գյուղական համայնքների զարգացում ծրագիր	3,185,957,431	
Դալմա-ՔՈԱՖ կրթաթոշակներ ծրագիր	2,480,000	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	3,799,893,795	

13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	3,477,264,595

Նշումներ՝

Հաշվետվության 12-րդ կետում նշված գումարի մեջ ներառված է ձեռնարկատիրական գործունեությունից ծախսեր՝ 322,629,200 (երեք հարյուր քսան երկու միլիոն վեց հարյուր քսան ինը հազար երկու հարյուր) ՀՀ դրամ

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 29 էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐ»

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2024թ.

ԵՐԵՎԱՆ 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	3
ՖԻՆԱՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	6
ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	7
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	8
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	9
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ՄԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	10

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
22 Հանրապետության փող.
0010 Երևան, Հայաստանի Հանրապետություն
Հեռ. +374(10) 544-301/307/309
Էլ. փոստ: info@bakertillyarmenia.com
www.bakertilly.am

26.05.2025թ.
N 022505

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն

Վահե Գևորգյան

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուներին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի (Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա գործունեության մասին հաշվետվությունը, զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Հիմնադրամի՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

ADVISORY · ASSURANCE · ACCOUNTING · TAX
Baker Tilly Armenia CJSC trading as Bakertilly is a member of the global network of Baker Tilly International Ltd., the members of which are separate and independent legal entities.

bakertilly

Այլ հանգամանք

Հիմնադրամի 2023 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, ով 2024 թվականի մայիսի 22-ին արտահայտել է չձևափոխված կարծիք այդ հաշվետվությունների վերաբերյալ:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Հիմնադրամի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Հիմնադրամի, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու,

bakertilly

այլ ոչ թե Հիմնադրամի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին վերահսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Մեղրակ Բաղալյան

Աուդիտոր

26 մայիսի 2025թ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	Ծանոթ.	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	5,745,397	4,707,868
Ոչ նյութական ակտիվներ		16,144	9,565
Հետաձգված հարկային ակտիվներ		174	-
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների ձեռք բերելու համար		2,595	19,551
Տրված փոխառություններ		-	3,111
		5,764,310	4,740,095
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	5	457,959	451,185
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6	134,962	81,676
Շահութահարկի գծով դեբիտորական պարտքեր		-	850
Բանկային ավանդներ	7	2,048,591	139,676
Տրված փոխառություններ		4,809	3,396
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	8	392,365	344,205
		3,038,686	1,020,988
Ընդամենը ակտիվներ		8,802,996	5,761,083
Պարտավորություններ և զուտ ակտիվներ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	9	5,742,037	4,736,985
		5,742,037	4,736,985
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ		3,000	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	10	141,538	122,985
Շահութահարկի գծով պարտավորություն		13,663	-
Եկամուտներին վերաբերող շնորհներ	11	2,852,612	904,637
		3,010,813	1,027,622
Զուտ ակտիվներ			
Կուտակված արդյունք		50,146	(3,524)
		50,146	(3,524)
Ընդամենը պարտավորություններ և պահուստներ		8,802,996	5,761,083

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2025թ. մայիսի 26-ին:

Լիանա Գալստյան — Գործադիր տնօրեն

Նվարդ Կարապետյան — Գլխ. հաշվապահ, «Թի Ընթանթ» ՍՊԸ

1-29 ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱԶՄՈՒՄ ԵՆ ՍՈՒՅՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍԸ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	Ծանոթ.	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Իրացումից հասույթ	12	249,848	105,548
Վաճառքի ինքնարժեք		(69,132)	(38,535)
Համախառն շահույթ		180,716	67,013
Շնորհներից եկամուտ	13	2,615,223	2,098,841
Ծրագրային ծախսեր	14	(2,226,649)	(1,776,589)
		569,290	389,265
Այլ եկամուտ		20,789	3,440
Իրացման ծախսեր	15	(166,168)	(83,770)
Ընդհանուր և վարչական ծախսեր	16	(406,622)	(323,872)
Այլ ծախսեր		-	(389)
Այլ ֆինանսական արդյունքներ		1,202	1,365
Ֆինանսական եկամուտ	17	50,006	11,504
		68,497	(2,457)
Շահութահարկի գծով ծախս	18	(14,827)	(1,067)
		53,670	(3,524)

1-29 ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱԶՄՈՒՄ ԵՆ ՍՈՒՅՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍԸ

ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	Կուտակված արդյունք	Ընդամենը
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	-	-
Տարվա արդյունք	(3,524)	(3,524)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	(3,524)	(3,524)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(3,524)	(3,524)
	-	-
Տարվա արդյունք	53,670	53,670
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	53,670	53,670
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	50,146	50,146

1-29 ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱԶՄՈՒՄ ԵՆ ՍՈՒՅՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍԸ

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա արդյունք	53,670	(3,524)
Ճշգրտումներ՝		
Մաշվածություն և ամորտիզացիա	335,866	300,947
Հիմնական միջոցների օտարումից վնաս	199,330	71,785
Շահութահարկի գծով ծախս	14,827	1,067
Ֆինանսական եկամուտ	(50,006)	(11,504)
Շնորհներից եկամուտ	(2,615,223)	(2,098,841)
Այլ ֆինանսական արդյունքներ	(1,202)	(1,365)
	(2,062,738)	(1,741,435)
Փոփոխություններ հետևյալ հոդվածներում՝		
Պաշարներ	(6,774)	(3,777)
Դեբիտորական պարտքեր	(36,653)	77,550
Բանկային ավանդներ	(1,871,500)	(12,850)
Կրեդիտորական պարտքեր	18,810	48,030
Գործառնական գործունեության համար օգտագործված դրամական միջոցներ	(3,958,855)	(1,632,482)
Վճարված շահութահարկ	(1,721)	(11,808)
Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(3,960,576)	(1,644,290)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(1,570,949)	(968,149)
Տրված փոխառություններ	1,698	283
Ստացված տոկոսներ	5,469	11,504
Ստացված շնորհներ	5,568,172	2,830,789
Ներդրումային գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	4,004,390	1,874,427
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված փոխառություններ	12,000	-
Փոխառությունների մարումներ	(9,000)	-
Ֆինանսավորման գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	3,000	-
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ	46,814	230,137
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	1,346	1,591
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում (տե՛ս ծանոթ. 8)	344,205	112,477
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում (տե՛ս ծանոթ. 8)	392,365	344,205

1-29 ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱԶՄՈՒՄ ԵՆ ՍՈՒՅՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍԸ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (Հիմնադրամ) հիմնադրվել է 2003թ.:

Հիմնադրամի նպատակն է ցուցաբերել աջակցություն երեխաների բարեկեցության, առողջապահության և կրթության բնագավառներում Հայաստանում՝ առողջապահական, կրթական, ենթակառուցվածքային, տնտեսական զարգացման և սոցիալական ծրագրերի իրականացման միջոցով:

Հիմնադրամի աշխատակիցների միջին թվաքանակը 2024թ. կազմել է 169 մարդ (2023թ.՝ 169 մարդ):

Հիմնադրամի իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան 0001, Մելիք-Ադամյան 2/2:

Գործարար միջավայր

Իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում սրվել է Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի պատճառով: Չնայած կնքված զինադադարի համաձայնագրին՝ դեռևս անորոշ են պատերազմի հետևանքները Հայաստանի տնտեսության վրա թե կարճաժամկետ, թե երկարաժամկետ առումով:

2024թ. Հայաստանի Հանրապետությունում քաղաքական իրավիճակը շարունակում է մնալ համեմատաբար անկայուն, 44-օրյա Արցախյան պատերազմի հետևանքները դեռևս էական ազդեցություն են ունենում երկրի ընդհանուր տնտեսության վրա: 2023թ. սեպտեմբերին տեղի ունեցավ շուրջ 120,000 Արցախաբնակ հայերի բռնի տեղահանումը դեպի Հայաստան, որը լրացուցիչ տնտեսական և քաղաքական ցնցումների առիթ հանդիսացավ: Քաղաքական անկայուն իրավիճակի, միջազգային ճանապարհների պարբերաբար փակման, հրադադարի ռեժիմի կարճաժամկետ խախտումների հետևանքով, դժվար է հստակ կանխատեսել նշված պայմանների տնտեսական ազդեցությունը Հիմնադրամի գործունեության վրա:

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը հաստատել է արդյունավետ կառավարման իր հանձնառությունը, որը ենթադրում է հակակոռուպցիոն ջանքեր, թափանցիկություն և հաշվետվողականություն:

Վերոնշյալ իրադարձությունները կարող են հետագայում էական ազդեցություն ունենալ Հիմնադրամի ապագա գործունեության և ֆինանսական կայունության վրա, որոնց ամբողջական հետևանքները դժվար է կանխատեսել ներկա պահին: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Հիմնադրամի գործունեության վրա կարող են տարբերվել Հիմնադրամի ղեկավարության ներկա սպասումներից:

Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Հիմնադրամի գործունեության վրա:

2 ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՔԵՐ

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

2.2 Չափման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով (բացառությամբ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության) և սկզբնական արժեքի մեթոդով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Հիմնադրամի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Հիմնադրամի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Հիմնադրամի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 23-ում:

2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Հիմնադրամն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2024թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2024թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2023թ., որևէ էական ազդեցություն չեն ունեցել Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *«Փոփոխություններ Ապահովագրական պայմանագրերում»* ՖՀՄՍ 17, ներառյալ ՖՀՄՍ 9-ի կիրառումից ժամանակավոր ազատման երկարաձգումը (ՖՀՄՍ 4 փոփոխություններ)
- *«Մեկ գործարքից առաջացող ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ»* (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)
- ՖՀՄՍ 17-ի և ՖՀՄՍ 9-ի սկզբնական կիրառում – Համեմատական տեղեկատվություն (ՖՀՄՍ 17 փոփոխություն)
- *«Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում»* (ՀՀՄՍ 8 փոփոխություններ)
- *«Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում»* (ՀՀՄՍ 1 փոփոխություններ և ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2)
- *«Միջազգային հարկային բարեփոխումներ – Pillar 2 կանոններ»* (ՀՀՄՍ 12 փոփոխություն)

Բացառությամբ ՀՀՄՍ 1 փոփոխությունների և ստորև ներկայացված ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2-ի՝ *«Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում»*, փոփոխությունների, մյուս ստանդարտներ և փոփոխություններ էական ազդեցություն չեն ունեցել Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՀՀՄՍ 1 փոփոխություններ և ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2 *«Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում»*

ՀՀՄՍ 1 փոփոխությունները և ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2-ը տրամադրում են ուղեցույց և օրինակներ՝ օգնելու կազմակերպություններին կիրառելու էականության վերաբերյալ դատողություններ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը բացահայտելիս: Փոփոխությունների նպատակն է օգնել կազմակերպություններին տրամադրել ավելի օգտակար տեղեկատվություն հաշվապահական հաշվառման քաղաքականության մասին՝ փոխարինելով հաշվապահական հաշվառման «նշանակալի» քաղաքականության բացահայտման պահանջը հաշվապահական հաշվառման «էական» քաղաքականության բացահայտման պահանջով և ավելացնելով ուղեցույց այն մասին, թե ինչպես պետք է կազմակերպությունները կիրառեն էականության հայեցակարգը:

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Հիմնադրամի կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Հիմնադրամի կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականությունում՝ սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխություններն էական ազդեցություն չեն ունենա Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

«Փոխանակելիության բացակայություն» (ՀՀՄՍ 21 փոփոխություն)

«Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ» (ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ)

ՖՀՄՍ 18 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում»

3 ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Հիմնադրամի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը. 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 396.56 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 413.89 դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 404.79 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 447.90 դրամ): Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3.2 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորություններն ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Հիմնադրամի՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամուտում կամ այլ ֆինանսական արդյունքներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որն արտացոլված է այլ ծախսերում: Հիմնադրամի ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 20-ում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին և դասակարգված չեն որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով.

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունն աննշան է, զեղչում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են

դասակարգվում Հիմնադրամի դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը և այլ դեբիտորական պարտքերի մեծամասնությունը:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հիմնադրամը հաշվառում է առևտրային և այլ դեբիտորական պարտքերը օգտվելով պարզեցված մոտեցումից և կորստի գծով պահուստը ձևակերպում է որպես գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ: Դրանք իրենցից ներկայացնում են պայմանագրային դրամական հոսքերի ակնկալվող դադարեցումները՝ հաշվի առնելով ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում ցանկացած պահի չմարվելու հնարավորությունը: Ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս Հիմնադրամն օգտագործում է պահուստի մատրիցան՝ ելնելով պատմական փորձից, արտաքին ցուցանիշներից և ապագային առնչվող տեղեկատվությունից:

Հիմնադրամը գնահատում է առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկումը հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ, դրանք խմբավորվել են՝ ելնելով ժամկետանց օրերից:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Հիմնադրամը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը, վարձակալության գծով պարտավորությունները: Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն 20-ում:

Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Իրական արժեքի և նոմինալ արժեքի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ փոխառությունը ստացվել է սեփականատերերից: Այս դեպքում իրական և նոմինալ արժեքների միջև տարբերությունը ճանաչվում է սեփական կապիտալում որպես լրացուցիչ կապիտալ: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.3 Շնորհներ

Շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Հիմնադրամը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Շնորհները, որոնց հիմնական պայմանը Հիմնադրամի կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սիստեմատիկորեն փոխանցվում են տարվա արդյունք՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ պետական շնորհները ճանաչվում են սիստեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Պետական շնորհը, որը հատկացվում է Հիմնադրամին՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

3.4 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Հիմնադրամն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի զեղչման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

3.5 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող արդյունքի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գուդվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ո՛չ հաշվապահական արդյունքի, ո՛չ էլ հարկվող արդյունքի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Հիմնադրամը կստանա բավարար հարկվող արդյունք, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային

հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Հիմնադրամը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

3.6 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

(ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,

(բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Հիմնադրամն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Հիմնադրամը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

3.7 Եկամուտ և իրացումից հասույթ

Հասույթը ձևավորվում է հիմնականում հյուրանոցային ծառայությունների մատուցումից և ուսումնական դասագրքերի իրացումից:

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել հասույթ, թե ոչ, Հիմնադրամն առաջնորդվում է 5-քայլի գործընթացով.

1 Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը

2 Բացահայտել կատարման պարտականությունները

3 Որոշել գործարքի գինը

4 Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև

5 Ճանաչել եկամուտը, երբ կատարման պարտականությունը(ները) բավարարված են

Շնորհներից եկամուտ

Այս եկամտի ճանաչման քաղաքականությունը ներկայացված է ծանոթագրություն 3.7-ում:

4 ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Հազար դրամ	Հող, շենքեր, շինություններ	Մեքենա-սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ, տնտեսական գույք, այլ	Անավարտ շինարարություն, վարձակալած ակտիվի բարելավում	Ընդամենը
Սկզբնական արժեք					
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	2,942,911	535,329	570,153	1,375,567	5,423,960
Ավելացում	128,603	64,937	28,090	772,736	994,366
Օտարում	-	(17,887)	(7,361)	(7,998)	(33,246)
Ներքին շարժ	1,298,577	66,413	137,441	(1,502,431)	
Վերադասակարգում պաշարների դասին	-	-	-	(434,134)	(434,134)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,370,091	648,792	728,323	203,740	5,950,946
Ավելացում	97,643	105,424	12,600	1,355,282	1,570,949
Օտարում	-	(7,302)	-	(199,746)	(207,048)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,467,734	746,914	740,923	1,359,276	7,314,847
Կուտակված մաշվածություն					
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	380,393	289,261	233,414	60,856	963,924
Տարվա հաշվարկ	125,621	76,672	81,423	15,798	299,514
Օտարման հետևանքով դուրսգրում	-	(15,433)	(4,927)	-	(20,360)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	506,014	350,500	309,910	76,654	1,243,078
Տարվա հաշվարկ	150,101	75,466	28,173	80,350	334,090
Օտարման հետևանքով դուրսգրում	-	(7,180)	-	(538)	(7,718)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	656,115	418,786	338,083	156,466	1,569,450
Հաշվեկշռային արժեք					
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,864,077	298,292	418,413	127,086	4,707,868
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,811,619	328,128	402,840	1,202,810	5,745,397

Հիմնական միջոցների մաշվածության ծախսը բաշխվել է իրացման ծախսերին՝ 1,832 հազար դրամ, ծրագրային ծախսերին՝ 332,258 հազար դրամ (2023թ.՝ ընդհանուր և վարչական ծախսերին՝ 71,752 հազար դրամ, ծրագրային ծախսերին՝ 227,762 հազար դրամ):

Հիմնադրամի հիմնական միջոցները հաշվետու ամսաթվի դրությամբ գրավադրված չեն:

5 ՊԱՇԱՐՆԵՐ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Պատրաստի արտադրանք	598	-
Անավարտ շինարարություն	432,781	372,413
Նվիրատվության համար նախատեսված ապրանքներ	14,326	70,300
Հումք	8,372	6,611
Վառելիք	1,882	1,861
	457,959	451,185

Հիմնադրամի պաշարները գրավադրված չեն:

6 ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ		
Առևտրային դեբիտորական պարտքեր	4,453	-
	4,453	-
Ոչ ֆինանսական ակտիվներ		
Տրված կանխավճարներ	115,088	49,791
Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	1,481	25
Ստացվելիք շնորհներ	13,940	26,887
Այլ	-	4,973
	130,509	81,676
	134,962	81,676

7 ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐ

Հազար դրամ	Պայմանագիր			2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		Ֆինանսական եկամուտ, 2024թ.	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		Ֆինանսական եկամուտ, 2023թ.
	Կնքման ամսաթիվ	Մարման ժամկետ	Տոկոսադրույք	Մայր գումար	Հաշվեգրված տոկոս		Մայր գումար	Հաշվեգրված տոկոս	
Ամերիաբանկ ՓԲԸ	7.02.2024	30.09.2024	7.6%	-	-	2,997	-	-	-
Ամերիաբանկ ՓԲԸ	7.02.2024	7.02.2025	9.6%	77,000	6,663	6,663	-	-	-
Ամերիաբանկ ՓԲԸ	29.10.2024	29.10.2026	9.6%	1,546,000	26,024	26,024	-	-	-
Ամերիաբանկ ՓԲԸ	30.10.2024	29.10.2026	9.6%	386,500	6,404	6,404	-	-	-
Ամերիաբանկ ՓԲԸ	24.07.2023	01.02.2024	6.5%	-	-	374	77,000	817	817
Ամերիաբանկ ՓԲԸ	17.12.2023	31.01.2024	7.5%	-	-	422	61,000	859	859
Ամերիաբանկ ՓԲԸ	16.12.2022	17.12.2023	9.5%	-	-	-	-	-	350
				2,009,500	39,091	42,884	138,000	1,676	2,026

8 ՄՆԱՑՈՐԴՆԵՐ ԴՐԱՄԱՐԿՂՈՒՄ ԵՎ ԲԱՆԿԵՐՈՒՄ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ միջոցներ	665	150
Բանկային հաշիվներ	389,471	343,601
Դրամական միջոցներ ճանապարհին	2,229	454
	392,365	344,205

Տես ծանոթագրություն 21՝ դրամարկղում և բանկում մնացորդների արժույթների բացահայտման համար:

9 ԱԿՏԻՎՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՇՆՈՐՀՆԵՐ

Հազար դրամ

	2024թ.	2023թ.
Տարեսկզբի մնացորդ	4,736,985	4,577,850
Տարվա ընթացքում ստացված միջոցներ	172,400	1,558
Ավելացում եկամտին վերաբերող շնորհներից	1,166,846	456,980
Տարվա ընթացքում օգտագործում	(334,194)	(299,403)
Տարեվերջի մնացորդ	5,742,037	4,736,985

10 ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Շինարարական պայմանագրերի երաշխիքային գումարների գծով պահուստ	53,488	45,538
Կրեդիտորական պարտքեր ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման գծով	23,001	-
Ստացված ծառայությունների գծով կրեդիտորական պարտքեր	42,383	40,547
Չօգտագործված արձակուրդային օրերի գծով պահուստ	17,742	2,619
Կրեդիտորական պարտքեր պաշարների ձեռքբերման գծով	2,083	850
Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով	2,449	33,415
Այլ	392	16
	141,538	122,985

Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Հիմնադրամն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

Հիմնադրամի արտարժութային ռիսկի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է ծանոթագրություն 18-ում:

11 ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՇՆՈՐՀՆԵՐ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեսկզբի մնացորդ	904,637	330,266
Տարվա ընթացքում ստացված միջոցներ	5,376,416	2,840,977
Շնորհի վերադարձ	(960)	(37,075)
Ստացվելիք շնորհներ	20,316	26,887
Տեղափոխում ակտիվներին վերաբերող շնորհներին (տե՛ս ծանոթ. 9)	(1,166,846)	(456,980)
Տարվա ընթացքում օգտագործում	(2,281,029)	(1,799,438)
Տարեվերջի մնացորդ	2,852,534	904,637

Տարվա ընթացքում դոնորների կողմից ստացված միջոցները ներկայացված են ստորև՝

Հազար դրամ	2024թ.	2023թ.
Հայաստանի մանուկներ հիմնադրամ, Նյու Յորք	5,165,757	2,530,605
H. O. P. E. ծրագիր	37,943	98,996
ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատուն	77,213	81,841
Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (GIZ GmbH)	-	80,125
Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության (ԱՀԱԸ) Հայաստանի մասնաճյուղ	4,620	16,128
Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ	21,048	-
Վահե Ընդ Լյուսի հիմնադրամ	24,012	-
Այլ	45,823	33,282
	5,376,416	2,840,977

Տարեվերջի մնացորդը ներկայացնում է ստորև նշված դոնորներից ստացված միջոցների չօգտագործված մնացորդը՝

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հայաստանի մանուկներ հիմնադրամ, Նյու Յորք	2,765,239	711,977
H. O. P. E. ծրագիր	32,272	89,261
ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատուն	18,868	69,761
Վահե Ընդ Լյուսի հիմնադրամ	1,490	-
Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության (ԱՀԱԸ) Հայաստանի մասնաճյուղ	5,340	8,535
Այլ	29,325	25,103
	2,852,534	904,637

12 ԻՐԱՑՈՒՄԻՑ ՀԱՍՈՒՅԹ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ծառայությունների մատուցումից հասույթ		
Կոնցեպտ հյուրանոց	199,423	105,548
Այցելուների կենտրոն	10,530	-
Այլ	37,028	-
	246,981	105,548
Ապրանքների իրացումից հասույթ		
Դասագրքերի և տետրերի իրացում	2,867	-
	2,867	-
	249,848	105,548

13 ՇՆՈՐՀՆԵՐԻՑ ԵԿԱՄՈՒՏ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Եկամուտներին վերաբերող շնորհներից եկամուտ	2,281,029	1,799,438
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ	334,194	299,403
	2,615,223	2,098,841

14 ԾՐԱԳՐԱՅԻՆ ԾԱԽՍԵՐ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Կրթական ծրագրեր	421,697	240,131
Առողջապահական ծրագրեր	514,170	57,166
Սմարթ կենտրոնների ծախսեր	474,800	901,419
Սոցիալական ծրագրեր	201,640	191,892
Ենթակառուցվածքների զարգացում	219,781	208,207
Տնտեսական զարգացում	45,349	171,684
Հաղորդակցության ծախսեր	104,380	-
Զարգացման ծախսեր	54,045	-
Այլ	190,787	6,090
	2,226,649	1,776,589

15 ԻՐԱՑՄԱՆ ԾԱԽՍԵՐ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Մաշվածություն և ամորտիզացիա	1,178	-
Հատուցումներ աշխատակիցներին	123,777	74,737
Ապահովագրություն	3,205	2,894
Մարկետինգի և այլ ծախսեր	38,008	6,139
	166,168	83,770

16 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Մասնագիտական և խորհրդատվական ծախսեր	46,751	4,290
Հատուցումներ աշխատակիցներին	208,517	173,986
Վարձակալություն և կոմունալ ծախսեր	59,523	55,598
Սպասարկման և մաշվածության ծախսեր	21,830	35,523
Բանկային և ապահովագրական ծախսեր	16,479	13,606
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	7,761	2,124
Արտարժույթի փոխարկման ծախսեր	349	137
Այլ ծախսեր	45,412	38,608
	406,622	323,872

17 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Տոկոսային եկամուտ բանկային ավանդներից	42,884	2,026
Բանկային հաշիվների դրական մնացորդի վրա հաշվեգրված եկամուտ	7,122	9,478
	50,006	11,504

18 ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԾԱԽՍ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	15,001	1,067
Հետաձգված հարկ	(174)	-
	14,827	1,067

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ)	68,497		(2,457)	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2023թ.՝ 18%)	12,329	18.0	(442)	18.0
(Չհարկվող եկամուտ)/ չնվազեցվող ծախսեր, զուտ	2,498	3.6	1,509	(61.4)
Շահութահարկի գծով ծախս	14,827	21.6	1,067	(43.4)

19 ԿԱՐԵՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ ԵՎ ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

19.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Հիմնադրամն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետներ

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետների գնահատում: Ղեկավարության համոզմամբ, գնահատված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետներն էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

19.2 Կարևոր դատողություններ

Ստորև ներկայացված են ղեկավարության՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված դատողությունները, որոնք ամենաէական ազդեցությունն ունեն ֆինանսական հաշվետվությունների վրա:

Հետաձգված հարկային ակտիվների ճանաչումը

Այն չափը, որով կարող է ճանաչվել հետաձգված հարկային ակտիվ, կախված է այն հավանականության գնահատումից, թե արդյո՞ք ապագայում հասանելի կլինի եկամուտ, որի դիմաց կիրացվեն նվազեցման ենթակա ժամանակավոր տարբերությունները և նախորդ ժամանակաշրջաններից բերված հարկային վնասը: Ի լրումն, անհրաժեշտ է էական դատողություն հարկային միջավայրում իրավական և տնտեսական սահմանափակումների և անորոշությունների գնահատման ժամանակ:

20 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

20.1 Էական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3-ում:

20.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներն ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով պահվող ֆինանսական ակտիվներ		
Տրված փոխառություններ	4,809	6,507
Բանկային ավանդներ	2,009,500	138,000
Մնացորդներ դրամարկղում և բանկում	392,365	344,205
	2,406,674	488,712

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ		
Կրեդիտորական պարտքեր	121,347	86,951
	121,347	86,951

21 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Հիմնադրամը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են՝ շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Հիմնադրամը ներգրավված չէ սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Հիմնադրամը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Հիմնադրամը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի, տոկոսադրույքային ռիսկի և որոշակի այլ գնային ռիսկերի, որոնք բխում են ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

Արտարժութային ռիսկ

Հիմնադրամը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Հիմնադրամի գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Հիմնադրամի արտերկրյա վաճառքներից և ձեռքբերումներից, որոնք, ի սկզբանե, արտահայտված են ԱՄՆ դոլարով, եվրոյով և այլ արժույթներով:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Հիմնադրամին ենթարկում են արտարժութային ռիսկի, նկարագրված են ստորև: Արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են հիմնական ղեկավար անձնակազմին տրամադրված տվյալները, որոնք արտահայտված են հայկական դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով.

Հոդված	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	ԱՄՆ դոլար	
Ֆինանսական ակտիվներ		
Մնացորդներ բանկերում	450	178,772
Զուտ արդյունք	450	178,772

Հոդված	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	Եվրո	
Ֆինանսական ակտիվներ		
Մնացորդներ բանկերում	28,803	5
Զուտ արդյունք	28,803	5

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Հիմնադրամի զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի, եվրոյի և այլ արժույթների նկատմամբ դրամի 10% (2023թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2023թ.

10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2023թ.՝ 10%):

Դրամի արժեզրկումն ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ 10%-ով (2023թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը:

Հազար դրամ	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Եվրոյի ազդեցություն	
	2024թ.	2023թ.	2024թ.	2023թ.
Շահույթ կամ վնաս	4	17,877	2,880	-

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Հիմնադրամի արտարժութային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Հիմնադրամն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Հիմնադրամը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Անտոկոս		
Մինչև 6 ամիս	44,858	41,413
6 ամսից մինչև 1 տարի	23,001	45,538
Ավելի քան 1 տարի	53,488	-
	121,347	86,951

Հիմնադրամն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը: Հիմնադրամի ընթացիկ ակտիվներն ավելի են, քան ընթացիկ պարտավորությունները:

22 ՊԱՅՄԱՆԱԳԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

22.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Հիմնադրամը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Հիմնադրամի գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Հիմնադրամը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի

ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

22.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

23 ԿԱՊԱԿՑՎԱԾ ԿՈՂՄԵՐ

Հիմնադրամի կապակցված կողմերը ներառում են՝ «Հայաստանի մանուկներ հիմնադրամ Նյու Յորք» հիմնադրամը, Հիմնադրամի Հոգաբարձուների խորհուրդը, «Էներջայզ Գլոբալ Սերվիսիզ» ՓԲԸ-ն, որի հիմնադիրն է Հոգաբարձուների խորհրդի նախագահ պրն Ռիչարդ Բեզջյանը, ինչպես նաև հիմնական ղեկավար անձնակազմը, ինչպես նկարագրված է ստորև:

23.1 Վերահսկողություն

Հիմնադրամը վերահսկվում է Հոգաբարձուների խորհրդի կողմից: Հիմնադրամի հետ ընդհանուր վերահսկողության տակ գտնվող կազմակերպություն է համարվում «Հայաստանի մանուկներ հիմնադրամ Նյու Յորք» հիմնադրամը, որը գործունեություն է ծավալում Ամերիկայի Միացյալ Նահանգներում և գտնվում է ԱՄՆ, Նյու Յորք, 5-րդ պողոտա, 149 շենք, սենյակ 500 հասցեում:

23.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Հիմնադրամի և կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են՝

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործարքներ		
Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ		
Շնորհների ստացում	5,165,757	2,530,605
	5,165,757	2,530,605

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին	2023թ. դեկտեմբերի 31-ին

	ավարտված տարի	ավարտված տարի
Մնացորդներ		
Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ		
Եկամուտներին վերաբերող շնորհներ	2,765,239	711,977
Տարեվերջի մնացորդ	2,765,239	711,977

23.3 Գործարքներ ղեկավարության հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է «Հատուցումներ աշխատակիցներին» հոդվածում.

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ և պարգևատրումներ	38,867	39,795

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 24.06.2025 16:08